## ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ. ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ


# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 29 - 30 (16526) ՈՒՐԲԱԹ, 14 ԱՊՐԻԼԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## «ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՉԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԱՅԼ ԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՐՑԵՐ»



*Ապրիլի 11-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն պաշտոնական այցով գտնվում էր Երեւանում: Այցի շրջանակներում՝ Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Կարեն Կարապետյանի, բանակցություններ վարեց իր հայ գործընկեր Էդվարդ Նալբանդյանի հետ:*

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԲԱՐԵԿԱՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՆԿ ԵՆ»

Ապրիլի 11-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Երեւանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի հետ:

Ողջունելով հյուրին՝ Հայաստանի նախագահը հույս հայտնեց, որ Միխեիլ Ջանելիձեի պաշտոնական այցը Հայաստան կլինի արդյունավետ եւ նոր խթան կհաղորդի միջպետական կապերի ամրապնդմանը: Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ Հայաստանի համար բարեկամ Վրաստա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ



Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Հանդիպմանը Կարեն Կարապետյանը գոհունակություն հայտնեց 2017թ. փետրվարին Վրաստան կատարած պաշտոնական այցի արդյունքներից, որի շրջանակում Վրաստանի վարչապետի հետ քննարկվել են երկկողմ տնտեսական կապերի ակտիվացմանն ուղղված կոնկրետ ծրագրեր: Իր հերթին, Միխեիլ Ջանելիձեն վերահաստատեց Վրաստանի վարչապետի շահագրգռվածությունը՝ Հայաստանի կառավարության ղեկավարի այցի ընթացքում ձեռք բերված վերոնշյալ պայմանավորվածությունները կյանքի կոչելու հարցում:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին երկկողմ ու բազմակողմ ձեւաչափով տնտեսական համագործակցության ընթացքի շուրջ, անդրադարձան հետագա քայլերին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՑՈՒՅՑ ԿՏԱ, ՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է ԱՇԽԱՏԵԼ»



*Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա վերջին հիմնվեց սահմանադրական հանձնաժողով, որը մշակելու եւ մինչեւ ապրիլի 30-ը հանրությանն է ներկայացնելու Վրաստանի հիմնական օրենքի նոր խմբագրությունը: Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի գլխավորած հանձնաժողովի կազմում է նաեւ Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը:*

Սահմանադրական հանձնաժողովը, ապրիլի 11-ին, իր լիագումար նիստում ներկայացրեց սահմանադրության նոր նախագծի նախնական տարբերակը, որտեղ ներառված են կատավելիք փոփոխությունները: Նախնական տարբերակի ներկայացման կապակցությամբ մենք հանդիպեցինք սահմանադրական հանձնաժողովի անդամ, խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանին եւ խնդրեցինք պատասխանել ներկայացված նախագծի հետ կապված մի շարք հարցերի:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ ՀԱՄԱՅՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԸ ՆՇՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԸ



*Կիրակի, ժամը 11-ին Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի բոլոր գործող տաճարներում կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ՝ Հիսուս Քրիստոսի Հարության Հրաշափառ տոնին նվիրված:*

*Հաջորդ օրը, ապրիլի 17-ին, Մեռելոց է՝ ննջեցյալների հիշատակման օրը:*

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Ապրիլի 9-ին Վրաստանը նշեց Ազգային միասնության տոնը:*

Քսանութ տարի առաջ՝ 1989 թվականի ապրիլի 9-ին, Թբիլիսիի կենտրոնում, կառավարական շենքի առջեւ, խորհրդային զինված ուժերը բահերով ու թունավոր գազերով դաժանորեն ճնշեցին խաղաղ ցույցը, որի արդյունքում զոհվեց 21 մարդ, հազարավոր մարդիկ թունավորվեցին: Երկու տարի անց, նույն օրը, Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Վրաստանի անկախ պետականության վերականգնման հռչակագիրը:

Ի նշանավորումն ազգային միասնության օրվա, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում տեղակայված հուշակոթողի մոտ անցկացրեց հոգեհանգստի արարողություն՝ ի հիշատակ երկրի անկախության համար զոհվածների:

Վրաստանի պետական անկախության վերականգնման զոհերի հիշատակը հարգեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, կառավարության եւ խորհրդարանի անդամները: Նրանք ծաղիկներ դրեցին պետական անկախության վերականգնման համար զոհվածների հիշատակը հավերժացնող կոթողին:

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌՋԵՎ



Ապրիլի 9-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի գլխավորությամբ, Վիրահայոց թեմի պաշտոնեությունը, թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչները, հարգանքի տուրք մատուցեցին 1989 թվականի ապրիլի 9-ին Վրաստանի անկախության համար զոհվածների հիշատակին եւ ծաղկեպսակ դրեցին հուշակոթողին:

Վիրահայոց թեմի առաջնորդը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի, «Հայարտուն» մշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանի, «Խաղաղության» հիմնադրամի ղեկավար Գեւորգ Մինասյանի եւ ուրիշների հետ, աղոթք բարձրացրեցին առ Աստված զոհվածների հոգիների խաղաղության համար:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՃՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԲԱՎԱՐԱՐ ՌԵՍՈՒՐՍ, ՈՐՊԵՍԶԻ ԲՈԼՈՐ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՆԱՆ»

***Ապրիլի 12-ին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը ներկայացրեց կառավարական չորս կետից կազմված ծրագրի ամենախոշոր բաղադրիչի, տարածքի կարգավորման 2017-2020 թվականների գործողության ծրագիրը:***




Ծրագիրը նախատեսում է մասշտաբային եւ ներպետական նշանակության նախագծերի իրականացում, երկրում առկա հնարավորությունների առավելագույն օգտագործում եւ ծանրաբեռնված աշխատանք` երկրի արագ զարգացման համար:

2017-2020 թվականների գործողության ծրագիրը օրենսդիր եւ գործադիր իշխանության ներկայացուցիչներին, դիվանագիտական կորպուսին, միջազգային դոնոր կազմակերպություններին եւ լրատվամիջոցներին ներկայացրեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Զուրաբ Ալավիձեն: Նշեց, որ վերոնշյալ ժամանակահատվածում երկրի մասշտաբով իրականացվելու է շուրջ 2500 ենթակառույցային նախագիծ, իրականացվելու է մոտ հազար կիլոմետր ճանապարհի շինարարություն-վերանորոգումը, լրացուցիչ մոտ 500 հազար մարդ կօգտվի 24-ժամյա ջրամատակարարումից, վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն հասարակական-մշակութային նշանակության 120 օբյեկտներում եւ ենթակառույցային նախագծերի իրականացմամբ կստեղծվի 40 հազար նոր աշխատատեղ:

Վերոնշյալ նախագծերը իրականացվում են Վրաստանի կառավարության եւ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ, եւ դրա համար հատկացվում է 9 միլիարդ լարի:

Ելույթ ունենալով գործողության ծրագրի ներկայացման շնորհանդեսին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ասաց, որ 21-րդ դարում աշխարհագրական դիրքը չպետք է արգելքներ ստեղծի կրթության, առողջապահության եւ այլնի մատչելիության հարցում: «Համոզված եմ, որ երկրի զարգացման ծրագիրը, այն չորս կետից կազմված ծրագիրը, որը մշակել է մեր կառավարությունը, բեկումնային դեր կկատարի Վրաստանի արագ զարգացման գործում եւ երկրի ու ժողովրդի համար կստեղծի բացարձակապես նոր հնարավորություններ: Մեր չորս կետից կազմված ծրագրի ամենամասշտաբային նախագիծը տարածքի կարգավորումն է: Դրանում լրիվությամբ հաշվի են առնվել Վրաստանի բոլոր երկրամասերը: Մենք ունենք բավարար ռեսուրսներ, որպեսզի երկրամասերը միանման զարգանան, սակայն, ցավոք, դա այդպես չէ»,- շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

# «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ»

## Գ.ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԵՐԵՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԵՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»




***Ապրիլի 10-ին աշխատանքն սկսեց Վրաստան-ՆԱՏՕ ժողովրդական դիվանագիտության գագաթաժողովը, որն էլ հանդիսացավ Վրաստանում ՆԱՏՕ-ի օրերի միջոցառումների եզրափակիչ հավաքը:***

Երկօրյա գագաթաժողովին ներկա էին եւ խոսքով հանդես եկան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն: Գագաթաժողովի երկրորդ օրը դրա մասնակիցներին խոսքով դիմեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Ինչպես իր խոսքում նշեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանը բոլոր ջանքերը գործադրում է եվրատլանտյան ինտեգրման դինամիկայի պահպանման եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները առավել բովանդակալից դարձնելու համար: «Մեզ համար նշանակալից է այն, որ ալյանսին անդամակցելու հարցով ինտենսիվ երկխոսություն է տարվում հասարակայնության հետ, եւ քաղաքացիներն ակտիվորեն ներգրավված են այդ գործընթացում, ինչը հասարակայնության լուրջ աջակցության վկայությունն է»,- հայտարարեց վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին առանձնակի ընդգծեց մայիսի 26-29-ին Վրաստանում ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեայի անցկացման եւ ալյանսի գլխավոր քարտուղարի Թբիլիսի այցելության նշանակությունը: «Մենք դա գնահատում ենք որպես Վրաստանի եվրատլանտյան միտումների ՆԱՏՕ-ի անխախտելի աջակցություն»,- ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Ժողովրդական դիվանագիտության գագաթաժողովում իր խոսքում Վրաստանի նախագահը` խոսելով Եվրամիության ու Հյուսիսատլանտյան ալյանսին ինտեգրման ճանապարհին Վրաստանի ձեռք բերած հաջողությունների մասին, անդրադարձավ նաեւ Ռուսաստանի վարած քաղաքականության թեմային: Նախագահը տարակուսանք հայտնեց այն կապակցությամբ, որ, չնայած պաշտոնական Թբիլիսիի կողմից վարած «Ռազմավարական զսպվածության» քաղաքականության, Մոսկվան շարունակում է ագրեսիվ գործողությունները բռնազավթված տարածքներում:

Իր խոսքում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վերջին տարիների ընթացքում առաջին անգամ հրապարակորեն հայտարարեց Վրաստանի շահերը պաշտպանելու գործընթացում ռուսաց լեզվի օգտագործման կարեւորության մասին: Նրա խոսքով` «ռուսաց լեզվի օգտագործումը անհրաժեշտ է, որպեսզի ճշմարտությունն ասվի մեր քաղաքականության ու կյանքի մասին, դա հատկապես կարեւոր է Վրաստանի վերաբերյալ իրական ու ճշմարիտ տեղեկատվություն տարածելու գործընթացում»:

Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ «ռուսաց լեզուն անհրաժեշտ է նաեւ ակտիվորեն օգտագործել ռուսական քարոզչությանը դիմակայելու համար, որն ուռճացնում է երկրում առկա խնդիրները եւ ակտիվորեն աջակցում վրաց հասակության մի մասի մեջ ՆԱՏՕ-ի նկատմամբ թերահավատության հաստատմանը»: Նրա խոսքով` «չի կարելի մոռանալ ռուսաց լեզուն, դա հատկապես կարեւոր է աբխազների եւ օսերի հետ շփվելու համար»:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

***Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Պետրե Կանկավան Ախալցիխեի ուսանողներին մանրամասնորեն ներկայացրեց «1+4» նախագծին մասնակցելու համար հատկացված հանրային հատվածում ստաժավորման ծրագիրը:***



Ախալցիխեի, Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանում տեղի ունեցած հանդիպմանը ներկա էին «1+4» նախագծի ուսանողներ Ախալցիխեից եւ Ախալքալաքից:

Պետնախարարի առաջին տեղակալը նրանց ներկայացրեց ստաժավորման պիլոտային նախագիծը: Պետրե Կանկավայի հայտարարությամբ, ստաժավորման նախագիծը հանրային հատվածում աշխատելու հեռանկարներ է ստեղծում: Նա նշեց նաեւ, որ նախագծի համար գրանցման ժամկետը երկարաձգվում է մինչեւ ապրիլի 18-ը, եւ դիմորդները, դիմումի ձեւաթղթում գրավոր երաշխավորության փոխարեն, պետք է նշեն երաշխավորի կոնտակտային տեղեկատվությունը: Գրանցումը կարելի է անցնել http://smr.gov.ge/Notifcations/Program.aspx կայքի միջոցով:

Հանդիպմանը պետնախարարի առաջին տեղակալը խոսեց որակյալ բարձրագույն կրթության մատչելիության եւ պետական լեզվի իմացության նշանակության մասին: Նա ուսանողներին ներկայացրեց նաեւ այն քայլերը, որը պետությունը իրականացնում է քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ:

Հանդիպմանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի ռեկտոր Մերաբ Բերիձեն եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ

## ՔԱՅԼԵՐ` ՓՈԽՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ

*Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հետ Մոսկվայում ԱՄՆ-ի պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի առաջին բանակցությունները, որոնք տեղի են ունեցել ապրիլի 12-ին, որոշակի արդյունքներ են տվել: Լավրովի խոսքով` կողմերն սկսել են ավելի լավ հասկանալ միմյանց:*

*ԱՄՆ-ի պետքարտուղարին ընդունել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, որը հավաստել է ռուս-ամերիկյան հարաբերություններում առկա բազմաթիվ խնդիրները լուծելու Ռուսաստանի ձգտումը:*

*Բանակցությունների արդյունքներից մեկը դարձել է ՌԴ ԱԳ նախարարության եւ ԱՄՆ-ի Պետդեպատամենտի հատուկ ներկայացուցիչների նշանակումը, որոնց կհանձնարարվի վերլուծել երկու երկրների հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրները:*

*Կողմերը մեծ ուշադրություն են դարձրել Սիրիայի թեմային: Ռուսաստանը հաստատել է Սիրիայի երկնքում միջադեպերի կանխման հուշագիրը վերականգնելու պատրաստակամությունը: Լավրովի խոստովանությամբ` Մոսկվայի եւ Վաշինգտոնի կարծիքները լրջորեն բաժանվել են Սիրիայում քիմիական զենքի կիրառման թեմայի շուրջ:*

*Իր հերթին, ամերիկյան դիվանագիտության ղեկավարը հայտարարել է, որ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ղեկավարները պետք է պահպանեն կապի գծերը ռազմական ու դիվանագիտական կապուղիներով:*

ՇՎԵԴԻԱ

## ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՍՏՈԿՀՈԼՄՈՒՄ

*Ապրիլի 7-ին առեւանգված բեռնատարը, որը պատկանում է Spendrups ընկերությանը, Ստոկհոլմի կենտրոնի Դրոտնինգատան փողոցում վրաերթի է ենթարկել մարդկանց` անցնելով 550 մետր: Ոստիկանության տվյալներով, վիրավորվել է 15 մարդ, զոհվել են չորսը: Ահաբեկչական գործողության գործով դատախազությունը ձերբակալել է երկու մարդու, այդ թվում` ենթադրյալ կատարողին` Ռահմաթ Ակիլովին` Ուզբեկստանից: Կրոնոբերգի (Կունգսհոլմենի շրջան) քննչական մեկուսարանում կատարված հարցաքննության ընթացքում նա խոստովանել է կատարած հանցագործությունը:*

*Պարզվել է, որ ձերբակալվածը «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության կողմնակից է:*

ԵԳԻՊՏՈՍ

## ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

*Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ աս Սիսին երկրում երեք ամսով արտակարգ դրության ռեժիմ է հայտարարել այն բանից հետո, երբ ապրիլի 9-ին ղպտի եկեղեցիների մոտ երկու պայթյուններից հետո ավելի քան 40 մարդ զոհվեց:*

*27 ուխտավորներ, որոնք Տանտա քաղաքի Սբ. Գեւորգ եկեղեցի էին եկել Երուսաղեմ Տիրոջ մուտքի (Ծաղկազարդի կիրակիի) քրիստոնեական տոնին, զոհվել են առաջին պայթյունի ժամանակ: Եվս 16 մարդ զոհվել է Ալեքսանդրիայի Սբ. Մարկոսի տաճարում իրականացված պայթյունից, նրանց թվում` մեկ ոստիկան, որը մահապարտ ահաբեկչին խանգարել է մտնել եկեղեցի:*

*Հարձակման պատասխանատվությունն ստանձնել է «Իսլամական պետություն» ծայրահեղական կազմակերպությունը:*

*Ղպտի քրիստոնյաները կազմում են Եգիպտոսի բնակչության մոտավորապես 10 տոկոսը:*

## Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Ապրիլի 10-ին աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի նախագահ, պրոֆեսոր Դեւիդ Գորդոնը:*



Այցի նպատակն է ծանոթանալ կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի գործունեությանը, քննարկել բժշկական հանրակրթական ծրագրերի միջազգային հավաստագրման հեռանկարները:

2023 թվականից Վրաստանում բժշկական կրթության ուսուցանումը կարժանանա միջազգային ճանաչման: Բժշկական ծրագրերի հավաստագրումը պետք է համապատասխանի համաշխարհային ֆեդերացիայի չափորոշիչներին: Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնը ծրագրում է արժանանալ վերոնշյալ ֆեդերացիայի ճանաչմանը, ինչը թույլ կտա ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս իրականացնել բժշկական ծրագրերի հավաստագրում:

Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի նախագահը հանդիպում ունեցավ Վրաստանի կրթության նախարար, փոխվարչապետ Ալեքսանդր Ջեջելավայի ու առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոյի հետ: Նա վրացական կողմին ներկայացրեց բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի պահանջներն ու չափորոշիչները, պատասխանեց հետաքրքրող հարցերին:

Այցի շրջանակներում, Համաշխարհային ֆեդերացիայի պատվիրակությունն այցելեց Թբիլիսիի պետական բժշկական համալսարան, Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարան, Լուգարի անվան հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոն եւ լաբորատորիա:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՍԱՐՅԱՆ ՀԱՏՈՒՄԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն, անկախ այս կամ այն կատեգորիայի քաղաքացիների պատկանելության, ծննդաբերությունը եւ կեսարյան հատումը կֆինանսավորվեն պետության կողմից:*

«Անկախ նրանից, թե ինչ ապահովագրությունից է օգտվում քաղաքացին, պետությունը կշարունակի ծննդաբերության ֆինանսավորումը: Երկրորդ առանձնացվող հարցը՝ ուռուցքաբանությունն է: Պայմանականորեն հարուստ խմբին պատկանող քաղաքացիները, որոնք օգտվում են մասնավոր ապահովագրությունից, կօգտվեն ծննդաբերության ֆինանսավորման պետական ծրագրից», թեպետ ուռուցքային հիվանդության դեպքում՝ կզրկվեն այդ հնարավորությունից: Միջին եւ ցածր եկամուտ ունեցող խմբերի ներկայացուցիչները, անկախ ապահովագրության տարբերակից, կշարունակեն օգտվել պետության հովանավորությունից: Միջին եկամուտով քաղաքացիներին, եթե ուռուցքային հիվանդության դեպքում պահանջվի քիմիաթերապիա, ապա դա կֆինանսավորի պետությունը, իսկ ցածր եկամուտների դեպքում՝ կֆինանսավորվի ինչպես քիմիաթերապիան, այնպես էլ՝ հորմոնաթերապիան ու ճառագայթային թերապիան»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

Նշենք, որ ընդհանուր առողջապահության պետական ծրագրով սկսել են գործել դիֆերենցված փաթեթներ՝ քաղաքացիների տարբեր կատեգորիաների համար:

Առաջին կատեգորիայում ներգրավված են մինչեւ 5 տարեկան երեխաները, ուսանողները, կենսաթոշակառուները, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք, մանկավարժները եւ սոցիալապես կարիքավորները:

Երկրորդ կատեգորիայում ընդգրկված են այն քաղաքացիները, ում տարեկան եկամուտը գերազանցում է 40 հազար լարին: Նմանների թիվը Վրաստանում կազմում է 32 հազար:

Երրորդ կատեգորիան ընդգրկում է այն քաղաքացիներին, ում ամսական աշխատավարձը գերազանցում է 900 լարին, սակայն տարեկան եկամուտը 40 հազարին չի գերազանցում: Նմանների թիվը հասնում է 300 հազարի:

Չորրորդ կատեգորիայում այն անձինք են, ում վարկանիշային միավորները կազմում են 70-ից մինչեւ 100 հազար միավոր: Հինգերորդ կատեգորիայում ներառված են ցածր եկամուտ ունեցող կամ ոչ մշտական աշխատանք եւ եկամուտ ունեցող անձինք:

ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔ

# «ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅՈՒՄ

*Ապրիլի 9-ին Ցխինվալիի տարածաշրջանում անցկացվեցին, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի նախագահական ընտրություններ եւ հանրաքվե, այսպես կոչված, Հարավային Օսեթիան «Ալանիա պետություն» վերանվանելու հարցով:*

Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին, ապա գործող դե-ֆակտո նախագահ Լեոնիդ Թիբիլովը հավաքել է ձայների 48,8 տոկոս, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի խորհրդարանի նախագահ Անատոլի Բիբիլովը՝ 36,9 տոկոս, այսպես կոչված, պետանվտանգության կոմիտեի աշխատակից Ալան Գագլոեւը արժանացել է քվեների 16,8 տոկոսի աջակցությանը: Առաջին փուլում ընտրություններում հաղթելու համար անհրաժեշտ էր հավաքել մասնակիցների 50 տոկոսից ավելի ձայներ:

Այսպես կոչված, Հարավային Օսեթիայի, նախագահական ընտրություններում կանցկացվի երկրորդ փուլը:

Ինչ վերաբերում է երկրի անվանումը փոխելու հարցին, այսպես կոչված, հանրաքվեին, ապա, այն «Ալանիայի պետություն» կոչելու օգտին քվեարկել է ընտրողների 81,5 տոկոսը:

Ցխինվալիի տարածաշրջանում, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի նախագահական ընտրությունները եւ երկրի անվանման փոխման հարցով հանրաքվեն, դատապարտել են Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրանց խոսքով, Ռուսաստանի թելադրանքով անցկացված այդ «միջոցառումները» ուղղված են Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ եւ դատապարտվում են միջազգային հանրության կողմից:

# ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՑԽԻՆՎԱԼԻԻ ՏՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԵՆ»



Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, մեկնաբանելով ինքնահռչակ Հարավային Օսեթիայում անցկացված, այսպես կոչված, նախագահական ընտրություններն ու հանրաքվեն, հայտարարեց, որ դրա արդյունքները միջազգային հանրության կողմից չեն ճանաչվի: «Ցխինվալիի տարածաշրջանը վերածվել է փշալարերով շրջափակված տարածքի, որտեղ մարդկանց համար դժվար է սահմանել ապագայի հեռանկարները: Հետեւաբար, ինչպես մեր երկրի, այնպես էլ՝ միջազգային հանրության համար, դրանց արդյունքները իրավական ոչ մի ուժ չունեն»,- հայտարարեց պետնախարարը, եւ հույս հայտնեց, որ աբխազներն ու օսերը գիտակցում են, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում իրենց տարածաշրջաններում, ուղղված է դե-ֆակտո բռնազավթման, եւ ուղիներ կգտնվեն ժողովուրդների միջեւ հաշտեցման ու վստահության վերականգնման համար:



## ԱՊՐԻԼԻ 14-Ը՝ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ



*Այսօր՝ ապրիլի 14-ին, Վրաստանը նշում է վրաց լեզվի օրը:*

*1978 թվականի ապրիլի 14-ին Վրաստանի բնակչությունը զանգվածային ելույթով հակադրվեց Վրաստանում որպես պետական լեզվի, վրացերենի կարգավիճակի վերացման մասին Խորհրդային Միության որոշմանը:*

*Այդ օրը Ռուսթավելու պողոտայի վրա, կառավարական տան առջեւ հավաքվեց գրեթե 100 հազար մարդ, եւ առաջին անգամ Խորհրդային Միության պատմության մեջ կոմունիստական վարչակազմը նահանջեց:*

*Ապրիլի 14-ը հայտարարվեց վրաց լեզվի օր եւ օրվա առթիվ Քուռ գետի աջափնյակում տեղադրված վրաց լեզվի հուշարձանի մոտ անցկացվում են ավանդական միջոցառումներ:*

## ԱՊՐԻԼԻ 14-17-Ը՝ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

*Սուրբ Զատկի տոնի կապակցությամբ, Վրաստանի հանրային դպրոցներում եւ մանկապարտեզներում ապրիլի 14-17-ը հայտարարվում են հանգստյան օրեր:*

*Ինչպես տեղեկացրեց երկրի կրթության նախարարությունը, Վրաստանի հանրային դպրոցներում արձակուրդը կսկսվի ապրիլի 14-ին, իսկ ուսումնական գործընթացը կսկսվի ապրիլի 18-ին:*

*Նույն աշխատակարգով կգործեն նաեւ մանկապարտեզները:*

## ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ 95960 ՔԱՂԱՔԱՑՈՒ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, 2016 թվականին վարորդական վկայական է ստացել 95960 քաղաքացի, ինչը 9269-ով գերազանցում է 2015 թվականի ցուցանիշը:*

*Վերջին երեք տարիների ընթացքում, վարորդական վկայականներ բոլորից շատ հանձնվել է 2014 թվականին՝ 130403 հոգու:*

## ՀՐԱԶԵՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ 12400 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

*Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, գերատեսչության սպասարկման գործակալության կողմից 2016 թվականին հրազենի ձեռքբերման համար թույլտվություն է տրվել 12400 քաղաքացիների:*

*Նախարարության վիճակագրական տվյալներով, հրազենի հետ վարվելու քննություն է հանձնել 6789 քաղաքացի:*

*Նշենք, որ վերոնշյալ քննությունը հանձնվում է 2015 թվականից:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(14 ապրիլի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.35 | 2.42 |
| ԵՎՐՈ | 2.482 | 2.607 |
| ՌՈՒԲԼԻ | 0.039 | 0.046 |
| ԴՐԱՄ | 0.0037 | 0.0053 |

*Ապրիլի 7-ի համեմատությամբ, դոլարի կուրսը նվազել է 0.015 լարիով:*

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# «ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՉԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԱՅԼ ԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՐՑԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի հետ հարաբերությունները թանկ են, եւ Հայաստանը շահագրգիռ է այդ բարիդրացիական հարաբերությունները տարեցտարի զարգացնել ու ավելի ամրապնդել:

Միխեիլ Ջանելիձեն Սերժ Սարգսյանին շնորհավորեց Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան խորհրդարանական ընտրությունների անցկացման եւ Հայաստանի Հանրապետական կուսակցության հաղթանակի կապակցությամբ:



### ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 11-ին Հայաստանի ԱԳ նախարարությունում տեղի ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեի եւ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը:

Այն մեկնարկեց դեմ առ դեմ ձեւաչափով, ապա՝ շարունակվեց պատվիրակության անդամների մասնակցությամբ:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին:

Էդվարդ Նալբանդյանը հյուրին ներկայացրեց ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եւ Հայաստանի համատեղ ջանքերը:

Զրույցի ընթացքում արծարծվեցին նաեւ վիրահայության հուզող խնդիրներ եւ դրանց լուծման ուղղությամբ իրականացվող քայլեր:

Հանդիպումից հետո նախարարները հանդես եկան մամուլի համար հայտարարություններով:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Վրաստանի արտաքին գործերի նախագահ Միխեիլ Ջանելիձեն, Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանի ուղեկցությամբ, ապրիլի 11-ին, այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Միխեիլ Ջանելիձեն ծաղկեպսակ դրեց հուշահամալիրում, նաեւ ծաղիկներ խոնարհեց անմար կրակի մոտ՝ հարգելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն Սուրեն Մանուկյանը Վրաստանի արտգործնախարարին ներկայացրեց հուշահամալիրի ստեղծման պատմությունը:

***Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի երեւանյան բոլոր հանդիպումներին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:***

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՑՈՒՅՑ ԿՏԱ, ՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է ԱՇԽԱՏԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

***- Պարոն Հենզել, դեռեւս նախորդ վարչակազմի օրոք մեկնարկեց սահմանադրական փոփոխությունների իրականացումը: Դուք այն ժամանակ էլ Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր էիք, եւ քաջատեղյակ եք, որ այն ժամանակվա փոփոխությունները չհանգեցրին սահմանադրության հստակեցված խմբագրության: Արդյունքում՝ ստացանք կիսանախագահական-կիսախորհրդարանական երկիր՝ պետության առաջին դեմքերի ոչ լրիվությամբ հստակեցված իրավասություններով ու գործառույթներով:***

- Իրոք, նման իրավիճակ էր ստեղծված: Դուք իրավացի եք, ես այն ժամանակ էլ խորհրդարանի պատգամավոր էի եւ լավ եմ հիշում այն բանավեճերը, որոնք անցկացվում էին սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ: Ցավոք, այն ժամանակ ինչ-ինչ նկատառումներից ելնելով (մոտեցող 2012 թվականի խորհրդարանական ընտրությունները, ներքաղաքական լարված իրավիճակը եւ այլն) հիմնական օրենքում վերջնականապես չհստակեցվեց նախագահականից խորհրդարանական հանրապետության անցնելու գործընթացը, ինչը, իրոք, դարձավ քաղաքական որոշակի երկիմաստության պատճառ (օրինակ՝ ունեինք համաժողովրդական ընտրված նախագահ՝ սահմանափակ լիազորություններով եւ խորհրդարանի կողմից հաստատված վարչապետ՝ ընդլայնված լիազորություններով): Այն, որ նման իրավիճակը երկար մնալ չէր կարող, ակնհայտ էր, թեպետ ակնհայտ էր նաեւ այն, որ հարկ էր գտնել այնպիսի «ոսկե միջինը», ինչը կհամապատասխաներ երկրի պատմությանը, բնակչության մտածելակերպին, բնականաբար, հենվելով միջազգային փորձի վրա: Հենց դրա համար էլ անցյալ տարի հիմնվեց սահմանադրական հանձնաժողովը: Ես չեմ խոսի դրա ձեւավորման ընթացքի մասին, «Վրաստան» թերթը ժամանակին գրել է դրա հետ կապված ելեւէջների մասին: Կասեմ միայն այն, որ, ըստ իս, սահմանադրական հանձնաժողովում ընդգրկվել էին բոլոր այն մարդիկ, ովքեր նման հարցերում որոշակի փորձ ունեին: Ներգրավվել էին նաեւ արտասահմանյան փորձագետները, ակտիվորեն ներգրավված էր հեղինակավոր Վենետիկի հանձնաժողովը:

Կցանկանայի հավաստիացնել, որ անցած չորս ամիսներին հանձնաժողովը վիթխարի ծավալի աշխատանք կատարեց, սահմանադրության նոր նախագիծը, կարելի է ասել, որ արդեն մշակվել է: Մնացածը արդեն որոշելու է ժողովուրդը:

***- Հիմնականում ի՞նչ փոփոխություններ են կատարվելու երկրի հիմնական օրենքում ներկայումս գործող կիսանախագահականից լրիվ խորհրդարանական պետության անցնելու համար:***

- Հիմնական փոփոխությունը առնչվում է երկրի նախագահի իրավասությունների եւ լիազորությունների հարցին: Նոր նախագծով Վրաստանի նախագահը հանդիսանում է պետության ղեկավարը, ազգային միասնության եւ անկախության երաշխիքը, թեպետ երկրի անվտանգության եւ պաշտպանության հարցերում նրա իրավասությունները սահմանափակվում են, վերացվում է նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհուրդը: Նախագահի ղեկավարությամբ Ազգային պաշտպանության խորհուրդը կգումարվի միայն ռազմական գործողությունների ժամանակ: Նախագահը զրկվում է Վրաստանը արտաքին հարաբերություններում գերագույն ներկայացուցչի իրավասություններից: Նա զրկվում է դատավորների, նաեւ Գերագույն դատարանի նախագահի թեկնածուներին առաջադրելու իրավունքից: Նախագահի փոխարեն այդ իրավասությունը վերապահվում է Արդարադատության Գերագույն խորհրդին:

Նախագահը, ինչպես սահմանադրության նախկին խմբագրությունում, ընտրվում է՝ 5 տարի ժամկետով, սակայն ոչ համընդհանուր անմիջական ընտրությամբ, այլ ընտրական կոլեգիայի կողմից, առանց քննարկումների, գաղտնի քվեարկությամբ: Ընտրական կոլեգիան կազմված է 300 անդամից, որի կազմում են Վրաստանի խորհրդարանի բոլոր պատգամավորներն ու Աբխազիայի եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ համամասնական ցուցակներով տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքների հաշվառմամբ ընտրված անձինք: Գործող սահմանադրությամբ սահմանված 35-ի փոխարեն, նոր նախագծով Վրաստանի նախագահ կարող է դառնալ 40-ն անց երկրի յուրաքանչյուր քաղաքացի, որը Վրաստանում ապրել է առնվազն 15 տարի եւ ընտրությունների օրը ապրում է Վրաստանում:

***- Իսկ ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում ընտրական օրենսգրքում, մասնավորապես, խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգի կապակցությամբ:***



Սահմանադրական հանձնաժողովի նիստի ժամանակ, աջից՝ Հենզել Մկոյանը

- Նոր նախագծով, Վրաստանում ներկայումս գործող խառը՝ մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերի փոխարեն, կներդրվի միայն համամասնական ընտրակարգը: Ընդ որում, ընտրությունների արդյունքներով չբաշխված մանդատները լրիվությամբ ստանում է ընտրություններում հաղթող սուբյեկտը: Նաեւ արգելվում է ընտրադաշինքների հիմնումը: Նոր օրենսգրքով Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել երկրի 25-ն անց ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ով Վրաստանում ապրել է առնվազն 10 տարի: Հիշեցնեմ, որ ներկայում գործող օրենքով պատգամավոր ընտրվելու տարիքը սահմանված է 21 եւ ավելի տարիքի համար: Երկրի օրենսդիր մարմնում կլինեն 150 համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներ, ընդ որում, ընտրական նշանագիծը պահպանվում է 5 տոկոսի մակարդակով:

Եվս մի հանգամանք: Երկրի սահմանադրությունից հանվում է խորհրդարանի գտնվելու վայրի մասին գրանցումը, այնպես, ինչպես հիմնական օրենքում բացակայում է Վրաստանի նախագահի եւ կառավարության գտնվելու վայրի մասին գրանցումը: Ինչ վերաբերում է խորհրդարանի գտնվելու վայրի հարցին, ապա այն կարգավորվելու է խորհրդարանի աշխատակարգով:

Նշեմ, որ երեք գումարման խորհրդարանի (1999-ից մինչեւ 2008 թվականը) պատգամավորի կարգավիճակով ինձ բախտ վիճակվեց աշխատել Թբիլիսիում, եւ երբ օրենսդիր մարմնի նստավայրը տեղափոխեցին Քութայիսի, ծագեցին որոշ բարդություններ: Իմ խորին համոզմամբ, խորհրդարանը պետք է գտնվի այնտեղ, որտեղ երկրի գործադիր մարմինն է աշխատում, որտեղ կենտրոնացած են կառավարման հիմնական մարմինները, այսինքն՝ մայրաքաղաքում, դա հարմար է ընտրողների հետ հանդիպումների ու նրանց հիմնախնդիրների կարգավորման համար:

***- Եվս էական ի՞նչ փոփոխություններ են ներառվել սահմանադրության նոր նախագծում:***

- Փորձել ենք առավելագույնս հստակեցնել եւ եվրոպական օրենսդրությանը համապատասխանեցնել մարդու իրավունքների, սեփականության իրավունքի եւ մյուս կենսական նշանակություն ունեցող հարցերի բաժինները: Նոր նախագծում, ինչպես նախընտրական ծրագրում, հայտարարել էր «Վրացական երազանքը», հստակեցվել է նաեւ ամուսնություն հասկացությունը, այն վավերացնելով՝ որպես տղամարդու եւ կնոջ կամավոր, իրավահավասար միություն:

Նշանակալի է, որ սահմանադրության նոր նախագծում լրիվությամբ պահպանվել է տնտեսական ազատության բաժինը, ըստ որի՝ ակցիզային հարկի բացառությամբ, նոր հարկերի սահմանումը կամ գործող համապետական հարկերի վերին նշանագծի փոփոխումը հնարավոր է միայն համընդհանուր հանրաքվեով, բնականաբար, օրգանական օրենքով նախատեսված դեպքերի բացառությամբ:

Բնականաբար, երկրի հիմնական օրենքի նոր նախագծի ընդունման-չընդունման հարցը, վերջին հաշվով, կախված է Վրաստանի բնակչությունից: Նոր նախագծի համաժողովրդական քննարկումը ցույց կտա, թե որքանով արդյունավետ ու արդիական է այն տարբերակը, որը մենք մշակել ենք:

***ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***